# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ-ն ԲԵՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/20 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 2 | Կոստյումի կտորի բաղադրությունը` 35% բամբակ և 65% պոլիէստեր, մակերեսային խտությունը` 250գր/մ2: Կտորը պետք է լինի ջրադիմացկուն: Կոստյումի մեջ պետք է լինի երկտակ ջերմամեկուսիչ նյութ, որից բաճկոնի ընդհանուր խտությունը լինի մինիմում 450գր/մ2, իսկ տաբատի ընդհանուր խտությունը լինի մինիմում 300գր/մ2: Բաճկոնի կրծքավանդակի, գրպանների վերևի (եզրային) ու մեջքի հատվածներում, ինչպես նաև տաբատի ծնկամասից ներքև գեղեցիկ համադրությամբ և համաչափությամբ պետք է լինի լուսանդրադարձնող ժապավեններ (համաձայնեցնել պատվիրատուի հետ): Բաճկոն - Աստառը լինի 100% պոլիեսթեր: - Գույնը` մուգ կապույտ (հիմնական), կարմիրի համադրությամբ (որպես լուսաանդրադարձող ժապավեն), որոնց երանգները համաձայնեցնել պատվիրատուի հետ - Արտահագուստը պետք է ունենա 7 գրպան, որից 4-ը բաճկոնի վրա, իսկ 3-ը տաբատի - Բաճկոնը լինի ուղիղ, կենտրոնական մետաղական կայծակ-շղթայով` պաշտպանված կպչուն ժապավենով կամ կոճակ-կնոպկայով ամրացող վրադիր դետալով - Բաճկոնի ներքևի հատվածում, ծալված եզրի միջով պետք է անցկացված լինի քուղ, որը կֆիքսվի ֆիքսատորներով երկու կողմից - Բաճկոնի օձիքը պետք է նախատեսված լինի կրման երկու տարբերակով` ուղղահայաց և ծալվող, որի վրա պետք է մետաղական շղթայով ամրացված լինի գլխարկ (капюшон), որը ունենա ձեռքով կարգավորվող քուղ ֆիքսատորներով: - Օձիքի, ինչպես նաև գլխարկի ներսի մասը պետք է կարված լինի տաք, փափուկ ֆլիսից - Բաճկոնի կրծքավանդակի ձախ մասում` 1 գրպան ուղղահայաց շղթայով, որի վրա պետք է լինի (badge)-ի համար նախատեսված համապատասխան հանգույց - Բաճկոնի վրա 2 կողքային գրպան թեքված մուտքով - Բաճկոնի ներսի ձախ մասում պետք է լինի 1 ծոցագրպան: - |

| | |
|---|---|
| | Բաճկոնի թևերի մանժետները պետք է լինի ուղիղ և ունենա ձեռքով կառավարվող հանգույցներ (липучка)։ - Բաճկոնի մեջքի թիկունքի վերևի կենտրոնական մասում պետք է ասեղնագործվի կամ դաջվի ԲԷՑ-ի լոգոն ամբողջությամբ համապատասխան գունային գամայի և դիզայնի։ Լոգոյի չափերը պետք է լինեն համաչափ և լավ տեսանելի (համաձայնեցնել պատվիրատուի հետ) Տաբատ - Տաբատը լինի ուղիղ ուրվագիծով։ - Առաջամասի մուտքի բացվածքը կայծակ-շղթայով և կոճակով, 2 կողքային գրպան թեքված մուտքով, իսկ հետևի 1 գրպան բաց ուղիղ մուտքով։ Տաբատի գոտկատեղի հատվածում լինի 6 հատ օղակ։ - Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը - Ապրանքները պետք է լինեն չօգտագործված - Մասնակիցը պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ՝ ձմեռային հանդերձանքի օգտագործվող գործվածքների/պարագաների, ինչպես նաև հետագայում նմուշների մեկական օրինակները - Մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի մատակարարված արտադրանքի խմբաքանակի համապատասխանությունը հավաստող լաբորատոր արձանագրություն - Լաբորատոր արձանագրությունը տրամադրող կազմակերպությունը պետք է լինի ՀՀ-ում հավատարմագրված - Արձանագրությունը պետք է կազմված լինի հետևյալ ցուցանիշների վերաբերյալ՝ - Կտորի բաղադրությունը՝ 35% բամբակ և 65% պոլիէստեր, մակերեսային խտությունը՝ 250գր/մ2 - Բաճկոնի ընդհանուր խտությունը ջերմամեկուսիչ նյութի հետ՝ մինիմում 450 գր/մ2 - Տաբատի ընդհանուր խտությունը ջերմամեկուսիչ նյութի հետ՝ մինիմում 300գր/մ2 - Աստառը լինի 100% պոլիեսթեր - Ինչպես նաև արտադրանքի գործվածքների (համաձայն սխեմատիկ պատկերի տրամադրված Արտադրողի/Վաճառողի կողմից) տոքսիկության ինդեքսը ջրի և օդի միջավայրերում համապատասխան թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին ՄՄ ՏԿ 017/2011 փաստաթղթի պահանջի համաձայն - Արտահագուստի ամբողջ խմբաքանակի պարագաները պետք է ունենան խնամքի համապատասխան պիտակներ - Ձմեռային հանդերձանքի քանակները /չափսերը լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից - Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի - Ձմեռային հագուստի կապույտ, կարմիր և ծիրանագույն երանգները համաձայնեցնել պատվիրատուի հետ - Մատակարարը պետք է Պատվիրատուին ներկայացնի բոլոր չափաբաժինների ընդհանուր քանակները, գումարած յուրաքանչյուր չափաբաժնից մեկական օրինակ՝ լաբորատոր փորձաքննության համար |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/20 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 2 | |